

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Թիֆլիսի սուկուրակիս գազեթ:

Հրատարակում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսոյ զինքը Մարտից մինչև Յունիսը քաղաքում 2 ման. 50 կոպ., դուրը 3 ման. թ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գաղեթին ստորագրող կարելի է խմբագրողի մօտ:

Գաղեթում հրատարակելու կընդունվին մասնատր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է խմանայ խմբագրատանը:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Օվաճատակներ 1867 թին: Տերութենի կորդարութիւնները: Թիֆլիսի քաղաքական կառավարութենի կանոնադրութիւնը: Մէկ քանի խօսք Թիֆլիսի նոր քաղաքական կառավարութենի կանոնադրութենի պատճառով: Զանազան տեղեկութիւններ: Անտարակն տեղեկութիւններ: Մասնատր յայտարարութիւններ:

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

1867 թիւն:

Ինչպէս հրատարակել էինք Վաճառականի, 30-դ № ումը 1867 թւին Վաճառական, կտպվի էնպիսի թերթերի վրայ, որ ամիսը հիմնական 4 կէս թերթի տեղ 3-ից մինչև 6-ը լինի իր մեծութենով: Գալ տարվան ստորագրողները կստանան ձրիաբար Վաճառական բառարան, որի մէջ ամենամեծ կլինին թէ առուտուրին վերաբերեալ գլխաւոր գործածված բառերը և թէ գլխաւոր փողերի որքանութիւնը Ռաի փողի հետ համեմատելով: 1867 թւին Վաճառականի մէջ կտպվին շարունակ ամեն նուսնուրը Ռուսաց տեղեկագրի ընկերութենից, ստացած թէ առուտուրին և թէ միւս հասարակական գործերին վերաբերեալ նոր համբաւները: Վաճառականի, գինը գալ տարի թէ քա-

ղաքում և թէ գուրսը կլինի 5 մ. Գալ տարի Վաճառականը, կգուրս գայ հինգ շաբթի օրերով:

Հիմնականից ընդունվում է գալ տարվան ստորագրութիւնը քաղաքում Վաճառականի, խրմբագրողի և նրա գլխաւոր գործակից պ. Ա. Երկեանցի մօտ, նմանապէս և գրավաճառ պ. Ա. Էնֆիաճեանցի գրատանը, իսկ օտար քաղաքացիները պէտք է դառնան ուղղակի Վաճառականի, ի քաղաքին էս հասցէով Վաճառականի, խմբագրող Գէորգ Տէր-Աղէքսանդրեանցին Թիֆլիսումը, իսկ Ռասերէն՝ Редактору Типографического Торгового листка Егору Тер-Александрову въ ТИФЛИСѢ.

Ինդրում ենք 1867 թւի մեր գաղեթին ստորագրվել ցանկացողներից, որ նրանք յայտնեն իրանց ցանկութիւնը մեզ մինչև էս տարվան նոյեմբերի վերջը, որ կարողանանք ստորագրողների թւի համեմատ կարգադրութիւն անել գալ տարվան համար:

ՏԵՐԹԻՒՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ:
Տ Ո Ր Գ Ե Ր :

Կտպանան սրիկադումը նոյեմբերի 4-ին նշանակված է Թիֆլիսի քաղաքական հի-

ւանդանոցի համար 1867 թւին 5293 մանէթի և 37¼ կոպեկի հաց, միս, բրինձ, եղ, սաստն, ճրագուէ մոմ, փէտ, քունջութի ձէթ, դարման, դարի, սպիտակեղէններ և ուրիշ նիւթեղէնների հասցեւու տորգը:

Թիֆլիսի դաւառական կառավարութենումը հոկտեմբերի 27-ին նշանակված է Թիֆլիսի քաղաքացի Յովհաննէս Քաղաքեանցի 459 մ. և 42 կ. գին դրած երկաթեղէնների, պողպատեղէնների, պղնձեղէնների, և չուգունեղէնների ծախելու տորգը:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ:

ԱՌԱՋԻՆ ԳՆՈՒԻ:

Քաղաքի կառավարութեի կողմէն, հորձեր և հորձուրութեի յն:

§ 1. Թիֆլիսի քաղաքական կառավարութիւնը երկու մասն է բաժանվում՝ ա. ընդհանուր՝ քաղաքի բոլոր հասարակութիւնների համար և բ. մասնատր՝ քաղաքի զանազան կարգ բնակիչների համար:

§ 2. Ընդհանուր քաղաքական կառավարութիւնը կազմվում է ա. ընդհանուր քաղաքական ժողովից և բ. բարեկարգող քաղաքական կառավարութեից, իր պաշտօնակալներով:

§ 3. Քաղաքի զանազան կարգ բնակիչների մասնատր կառավարութիւնը բաղկանում է՝ ա. ընարվածների ժողովից և բ. մասնատր կառավարութեից:

Մ ա ն օ թ ու թ իւ ն : Արհեստաւորների կառավարութիւնները (համբարները) մնում են վաղուցվան պէս իրանց կանոններով:

§ 4. Քաղաքագրուխը գլխաւորապէս լիակատար իշխանութիւն ունի բոլոր հասարակութեի կողմից և էզուր համար նրա պարտականութիւնն է հողալ հասարակութեի կարիքների և օգուանների համար:

ԱՌԱՋՈՒՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԷ

Ընդհանուր քաղաքական ժողովը և գործադիր կոմիտեի նախագահը:

§ 5. Ընդհանուր քաղաքական ժողովը կազմվում է նախագահ քաղաքագլխից և անդամներից (старшины и гласные), որոնք ընտրվում են քաղաքի բոլոր բնակիչներից: Ընդհանուր ժողովի գործառնությունները համար կղանվի էստեղ քաղաքական ատենադպիր:

§ 6. Ընտրություններումը ձէն ունեցող քաղաքի բնակիչները բաժանվում են չորս կարգ՝ ա. տոնմական աղյուսակներ, որոնք քաղաքումը անշարժ կայք ունին և կամ պարագում են վաճառականությունով կամ արհեստով, բ. անձնական աղյուսակներ և տոնմական և անձնական պատուար քաղաքացիներ, որոնք ունին քաղաքումը անշարժ կայք և կամ պարագում են վաճառականությունով կամ արհեստով, գ. քաղաքացիներ (մղբալաքներ և ախալմոսուներ), որոնք ունին քաղաքումը անշարժ կայք և գ. թիֆլիսի բոլոր բնակիչները, որոնք անշարժ կայք չունին, բայց քաղաքական հարկեր են տալիս: Էս չորս կարգի մարդկանցից 100—100 մարդ է ընտրվում մասնաւոր ժողովներ կազմելու համար և էս ընտրվածները իրանցից 25 հոգի անդամացու են նշանակվում ընդհանուր քաղաքական ժողովներումը: Բացի էս էս 100—100 ընտրվածներից երրորդ մասը կանդիդատներ են նշանակվում, որ նրանք ընդհանուր քաղաքական ժողովներումը բըռնեն անդամների տեղը, եթէ նրանք նշանակված ժամանակից առաջ որ և իցի պատճառով թողնեն իրանց պաշտօնը:

§ 7. Ընդհանուր քաղաքական ժողովը, որովհետև բաղկանում է քաղաքի բոլոր բնակիչների ներկայացնողներից, էդուր համար էլ քննում է քաղաքական հասարակությունից վերաբերեալ բոլոր գործերը և հասարակությունից կողմից ներգործում է բոլոր էն դիպուածներումը, երբ որ կանոնով նա պարտաւոր է հասարակական վճիռներ և կարգադրություններ անելու:

§ 8. Ընդհանուր ժողովի նիստը լինում է՝ ժամանակաւոր—իւտրվարին և հոկտեմբերին և կարգիցը դուրս: Ժամանակաւոր նիստերը նշանակվում են՝ ա. բարեկարգող քաղաքական կառավարությունից հաշիւների և ելուստի ցուցակների քննելու, բ. քաղաքի ունեցած պարտքերի ծածկելու համար հնարներ գտնելու, գ. քաղաքի բնակիչների դրելու զիբը և նմանապէս ընտրություններումը ձէն ունեցողների ցուցակները ստուգելու և հաստատելու:

դ. առ հասարակ քաղաքի բարեկարգությունին և քաղաքական անասություններ վերաբերեալ առարկաների քննելու, աչքի առաջն ունենալով հասարակական օգուտները և կարիքները և կամ իշխանությունից առաջադրություններով: Կարգիցը դուրս նիստերը նշանակվում են միայն դաւաճապետի կարգադրությունով շտապով քննելու ամենահարկաւոր հասարակական գործերի համար:

§ 9. Թէ ժամանակաւոր և թէ կարգիցը դուրս նիստերի մասին յայտնվում է բոլորին բարեկարգող քաղաքական կառավարությունից ձեռով: Ժողով չներկայացնող անդամը պէտք է քաղաքագլխին յայտնէ թղթով իր չդաւու պատճառը: Ովոր չի կատարի էս կանոնը և չի ուղարկի թուղթ իր չդաւու օրինաւոր պատճառների մասին, պատասխանատուութենի տակը կընկնի 1866 թւին տըպված քրէական կանոնների 1436 յօդուածի հիման վրայ:

§ 10. Ընդհանուր քաղաքական ժողովը էն ժամանակն է օրինաւոր համարվում, երբ որ կղանվին՝ քաղաքաղուսը, մասնաւոր կառավարությունից զլխաւորները և անդամների երրորդ մասը:

§ 11. Ընդհանուր քաղաքան ժողովների թէ ժամանակաւոր և թէ կարգիցը դուրս նշանակված նիստերումը կարելի է ժողովի հաճութենով հրաւիրել խորհրդակից լինելու և բոլորովին մասնաւոր մարդիկ, որոնցից կարելի է յուսալ օգտակար բացատրություններ գործի մասին, բայց էդ հրաւիրվածները ձէնի իրաւունք չեն ունենալու:

§ 12. Ժամանակաւոր նիստերը գործերի մեծությունն մտիկ տայով և մասնաւոր հաշիւների և ցուցակների քննելու համար կարող են մինչև 15 օր շարունակվիլ, իսկ կարգիցը դուրս նիստերումը պէտք է քննվին միայն առաջարկված խնդիրները և կարող են շարունակվիլ ոչ աւելի 7 օրից:

§ 13. Ընդհանուր քաղաքական ժողովը վաղորօք քաղաքի ելումտի ցուցակների, բարեկարգող կառավարությունից հաշիւների, ընտրությունումը ձէն ունեցողների ցուցակների մանրամասն քննելու և առ հասարակ շտա մեծ գործերի համար իր անդամներից առաջնին կոմիտաներ է սարգում: Էդ կոմիտաները, եթէ հարկաւոր կհամարեն, կարող են նախապէս իրանց նիստերումը հրաւիրել մասնաւոր մարդիկ՝ իրանց քննելու գործերի բացատրելու համար: Կոմիտային յանձնված բոլոր գործերը պէտք է կատարվին մինչև ընդհանուր քաղաքական ժողովի մէջ նշանակված նիստի ժամանակը:

§ 14. Ընդհանուր քաղաքական կառավարությունը վճուում է իրան պատկանած գործերը իր անդամների ձէնների շատութենով: Ժողովի վճիռները կարելի է տալ տեղական զաղեթումը ուտելն, տեղական լեզուով թարգմանություններ հետ:

§ 15. Ընդհանուր քաղաքական ժողովը իրանից կարգադրություններ չէ անում, այլ միայն հասարակական գործերի վճիռներ է դրում և յանձնում բարեկարգող քաղաքական կառավարությունին կատարելու համար և կամ եթէ կանոնով պահանջվում է իշխանություններն ներկայացնելու համար: Եթէ բարեկարգող քաղաքական կառավարությունը վճիռ կատարելու դժուարանում է, պէտք է էդուր մասին իմացում տայ ընդհանուր քաղաքական կառավարությունին և եթէ էդուրից յետոյ էլ ընդհանուր ժողովը հարկաւոր չհամարէ իր վճիռը փոխելու, էն ժամանակը բարեկարգող կառավարությունը կարող է ներկայացնել էդ իշխանությունին: Էդ իշխանությունին ներկայացնելու վճիռների հետ բարեկարգող կառավարությունը պէտք է ուղարկէ և իր կարծիքը գործի մասին: Եթէ որ և իցի պատճառով իշխանությունը չհաստատէ ընդհանուր քաղաքական ժողովի վճիռը, էն ժամանակը էն վճիռը անկատար է մնում:

§ 16. Ընդհանուր քաղաքական ժողովը պէտք է քննէ քաղաքական հասարակական կառավարությունից պաշտօնակալ անձների գործունէությունը, որ վերաբերվում են հասարակական գործերին: Եթէ ժողովը նկատէ էդ գործերի մէջ մեծ զանազանություններ և անհաւատարմություններ, կարող է վճիռ տալ նրանց հրաժարելու մասին և դատաստանով նրանցից պահանջել քաղաքական գանձաբանի գաշած վնասը: Էդ տեսակ վճիռները կկատարվին միայն էն ժամանակը, երբ որ կհաստատվին Կոմիտանան երկրի զլխաւոր կառավարությունից, էս կանոնադրությունից 15 § ումը նշանակված հիման վրայ:

§ 17. Երբ որ ընդհանուր քաղաքական ժողովը պէտք է էսպիսի գործեր քննէ, որոնց մէջ մասնակցություն կունենան կամ էդ ժողովի անդամները և կամ նրանց մօտիկ ազգականները, որոնց ժառանգությունը պէտք է հասնի կանոնով էն անդամներին, էն ժամանակը էդ անդամները չեն կարող էդպիսի գործերի քննող և դատաւոր լինիլ և եթէ էդպիսի անդամների հետացնելու էքրան անգամ. չմնայ ժողովումը, որքան հարկաւոր է գործի վճուելու համար, էդ դիպուածումը գործը յետաձգվում է մինչև հետեւեալ նիստը:

և հրաւիրում են էն օրը էնքան կանդի-
դաններ, սրբան անդամներ են հեռացրած
գործի քննելուց:

§ 18. Բնդհանուր քաղաքական ժողովը քա-
ղաքապետի համաձայնութեամբ կարող է ա-
ռանձին կամիտաներ սարգել և նրանցը
յանձնել քաղաքական կառավարութեանի այլ
և այլ մասնաւոր ճիւղերը անօրինակու, օրի-
նակ՝ քուչաների լուսաւորութիւնը, սալացա-
տակի շինութիւնը և կարգին պահելը, առ
հասարակ շինութիւնները և այլն: Եղ զիս-
ուածներումը էղ կամիտաների անդամների
պարտաւորութիւնը ընդհանուր քաղաքական
ժողովը յանձնում է էղ գործերի համար ա-
ւելի ընդունակ կամ անդամներին, կամ նը-
բանց կանդիդատներին, կամ բարեկարգող
քաղաքական կառավարութեանի անդամնե-
րին և կամ քաղաքի բնակիչներից նրանց,
սրանք ընտրութեանումը ձէն սնին: Եղ նույն-
տակին համարու համար ընդհանուր քաղա-
քական ժողովը քաղաքապետի համաձայ-
նութեամբ կարող է առանձին պաշտօններ
սահմանել, բայց առաջուց էղուր համար
զլխաւոր իշխանութեանից հրաման ստանալով:

ԵՐԿՐՈՐԻ ԲԱՃԱՆՈՒՄՆ:

Բարեկարգող քաղաքական կառավարութեանի
գործերը և գործառնութեանի շնչ:

§ 19. Թիֆլիսի բարեկարգող քաղաքական
կառավարութիւնը բաղկանում է նախագահ
քաղաքապետից, ութը անդամներից, սրանք
ընտրվում են քաղաքի բնակիչների ամեն
կարգերից 2—2 հոգի և մէկ անգամից, որ
նշանակվում է տէրութեանից: Ութը ան-
դամներից մէկը բարեկարգող կառավարու-
թեանի գանձապետի պաշտօնն է կատարում,
իսկ մնացած 7 անդամները հերթով վարում
են քաղաքի առտարական և անտեսական
պղծիցիայի գործերը: Բարեկարգող կառա-
վարութեանի անդամների մէջ պաշտօններ բա-
ժանելու իրաւունքը քաղաքապետինն է, որն
որ իբրև նախագահ կարգադրում է 1857 թվին
տարված օրէնքների II հատորի I մասի ընդ-
հանուր գաւառական կանոնադրութեանի 90-դ
յօդուածի հիման վրայ:

§ 20. Թիֆլիսի բարեկարգող քաղաքական
կառավարութեանի վարելու գործերն էն գոր-
ծերն են, որ նշանակված են էլէլ 1840 թվի
ապրիլի 10 ին հաստատված թիֆլիսի քա-
ղաքական հասարակական կառավարութեանի
համար, միայն էս կանոնադրութեանի մէջ
նշանակված փոփոխութիւնների և սրանից
յետոյ զլխաւոր իշխանութեանի արած փոփո-
խութիւնների բացառութեամբ:

§ 21. Բարեկարգող քաղաքական կառա-

վարութիւնը գտնվում է անընդմիջապէս գա-
ւառապետի վերաօնաւորութեանի տակը: Են
գործերը, որ վերաբերվում են քաղաքական
անտեսութեանին և հասարակական կառավա-
րութեանին և կանոնով ներկայացվում են իշ-
խանութեանին քննելու, գաւառապետը բա-
րեկարգող քաղաքական կառավարութեանի
վճռին համաձայն չդանուկլիս կարող է փո-
խել, էթէ քննելու առարկէն իր կարգա-
դրութեանից է կախված և ներկայացնվում է
բարձրագոյն իշխանութեանին իր ծանօթու-
թիւններին հետ միասին: Կապիտի գործերը,
որ գաւառապետի և բարեկարգող քաղաքա-
կան կառավարութեանի մէջ և նմանապէս գա-
ւառապետի և ընդհանուր քաղաքական կա-
ռավարութեանի մէջ անհամաձայնութիւններ
են ծագելոյնում, վճռվում են վերջաւորապէս
կապիտան փոխարքայի կարգադրութեամբ:

§ 22. Եթէ քաղաքական հասարակական
կառավարութիւնը ուշացնէ և կամ անկատար
թողնէ իշխանութեանից յանձնած կարգա-
դրութիւնների կատարելը և կամ էն հարկե-
րը չժողովէ, որ կանոնով քաղաքի պարտա-
ւորութեանն է, էն ժամանակը գաւառական
իշխանութիւնը պարտական է յիշեցնել էս
բաները հասարակական կառավարութեանին:
Եթէ էս միջոցը չյաջողի, էն ժամանակը գա-
ւառական իշխանութիւնը քաղաքի ծախսով
կատարումն է տալիս էս բոլոր կարգադրու-
թիւններին և մի և նոյն ժամանակը յայտ-
նում է կապիտան փոխարքային:

§ 23. Եթէ քաղաքական հասարակական
կառավարութիւնը բարձի թողի անէ իշ-
խանութեանից յանձնված գործերը, գաւառա-
կան իշխանութիւնը իրաւունք ունի յանդի-
մանութիւն անելու էղ գործերի կատարող
պաշտօնակալներին, իսկ էթէ մեծ անկարգու-
թիւններ և անհաւատարմութիւններ տեսնէ
կարող է դատաստանի տակ գցել նրանց և
էթէ հարկաւոր համարէ մի և նոյն ժամա-
նակը պաշտօնից էլ արձակէ, միայն կապի-
տան փոխարքայի կարգադրութեամբ:

§ 24. Բարեկարգող քաղաքական կառա-
վարութեանումը իշխանութեանից նշանակված
անդամին, որն որ միւս անդամների հետ հա-
ւասար իրաւունք ունի գործերի վճռելիս,
յանձնվում է քաղաքական կառավարութեանի
գործաւարութեանի կարգին մտիկ տալը և կա-
նոնով շարժվելը:

(կարոնականի)

Թ Ի Ֆ Լ Ի Ս

հոկտեմբերի 15—1866.

Մենք սրանից առաջ մէկ քանի ան-
գամ առթիւ ենք ունեցել ասելու, որ
ուսաց կառավարութիւնը անդադար
աշխատում է աւելի և աւելի միջոց տալ
մեզ մեր բարօրութեանի համար և թէ
կառավարութեանի էղ բոլոր հոգսերը
արժանաւոր պտուղներ կտան, էթէ հա-
սարակութիւնը ինքը ևս հոգայ իրա
համար և կառավարութեանի հետ միա-
սին աշխատէ իր բարեւաւորութեանի հա-
մար: Եղպէս է առ հասարակ աշխարհի
կարգը և կանոնը թէ ընդհանուրին և
թէ մասնաւորին վերաբերելով: Հա-
զար էլ որ կառավարութիւնը հոգայ
մեզ համար, կարգադրութիւններ անէ
դէպի մեր օգուտը, բայց էթէ մենք
մեր գործի վրայ հով լինինք, չաշխա-
տենք լաւանալու և մեր կենցաղավարու-
թիւնը բարեկարգելու, մենք ոչ թէ տա-
րերով, այլ դարերով կմնանք մէկ կետի
վրայ անփոփոխ:

Էս անգամով էս խօսքերն ասելու
պատճառ ունեցանք Թիֆլիսի քաղա-
քական կառավարութեանի նոր կանո-
նադրութիւնը, որ տպում ենք այժմ
«Վաճառականի», մէջ: Վաղուց նկատ-
վում էր, որ մեր քաղաքական հասա-
րակական կառավարութիւնը անյար-
մարութիւններ ունէր, էղ պատճառով
էլ կառավարութիւնը, նկատելով էղ
պակասութիւնը, էս 1866 թվի սկզբին
առանձին կոմիտեաներ սարգեց Թիֆլիսի
բնակիչների թիւն ու կայքն ու պարապ-
մունքն իմանալու: Եղ կամիտեաները
վերջացրել են իրանց գործը և հիմի
զրվել են և հաստատվել են էս կանոն-
ները:

Ինչպէս երևում է էս կանոնադրու-
թեանից, քաղաքական կառավարութեանի
անդամներ պէտք է լինին ոչ թէ միայն
վաղուցվան պէս քաղաքացիները, այլ և
միւս կարգի մարդիկն էլ օրինակ—ազ-
նւականները, աստիճանաւորները, պատ-
ւաւոր քաղաքացիները և արհեստա-
ւորները: Կարծիք չկայ, որ շատ կա-

նոնաւոր է էս նորութիւնը, որովհետեւ քաղաքական կառավարութիւնը քաղաքի բոլոր բնակիչներին համար է և ոչ թէ միայն քաղաքացիներու համար:

Յոյս կայ, որ նոր քաղաքական կառավարութեան անդամները աւելի ուշադրութիւն դարձնեն քաղաքի բարեկարգութեան: Շատ լաւ բաներ թէպէտ սկսած են մեզանում, բայց դեռ օրինաւոր չեն գլուխ եկած՝ օրինակ՝ ո՞վ կասէ հաստատարար, որ զիշերով լաւ է լուսաւորվում քաղաքը, որ ամեն տեղ շինվել են սալայտակներ և քարածէներն էլ օրինաւոր են, մանաւանդ մէկ քանի տեղ, որ քաղաքի կուր զետից հեռու կացող բնակիչները ջրի պահասութիւն չեն քաշում և այլն:

Ատուած տայ, որ նոր մարդիկը արժանի ուշադրութիւն դարձնեն թէ մեր պատմած քաղաքի պահասութիւններին և թէ միւս բաներին: Բարեկարգված կլինի քաղաքը և պայծառացրած մենք էլ աւելի ապահով կլինինք և բարօրութեան մէջ: Քանի քաղաքը բարեկարգվել է, կըքան նշանակում է, որ մենք առաջացել ենք և քաղաքակիրթ ազգերի կարգն ենք ընկել:

ՁԱՆԱԶԱՆ ՏՆՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Մեծ Իշխան Կովկասեան Փոխարքայի և Բարոն Ա. Նևկուլաու մասին: Կա Հոկտեմբերի 12-ին Մեծ Իշխան, Կովկասեան Փոխարքայ Միխայել Նիկալայիվիչը Պետերբուրգ գնալու պատճառով Կովկասեան փոխարքայութեան քաղաքական գործերի վարող մինչև իր յետ դառնալը նշանակել է բարձրագոյն հաստատված զլխաւոր կառավարութեան կանոնադրութեան 8 §-ի հիման վրայ Կովկասեան զլխաւոր կառավարութեան մեծ, սենատոր, սահաս-սեկրետար Բարոն Ա. Նևկուլաու:

Ապրիլի 4-ի գործի մասին: Հոկտեմբերի 5-ին զեպէլայով գրում են Պետերբուրգից, որ թաղաւորական յանցաւոր

ինչուտինին ամենաողորմածարար կեանք է չնորձ և միւս յանցաւորների պատիժներն էլ թեթեացրած են:

Հայերը և ապրիլի 4-ի գործը: Բարձրագոյն շնորհակալութիւն է յայտնած ապրիլի 4-ի անցքի պատճառով ուսաց կայսեր յայտնած հաւատարիմ հրատարակութեան զգացմունքների համար Նախիջևանի հայ հոգևորականներին և բոլոր հասարակութեանին, Նլխավետապոլի հայ հասարակութեանին և Ղազախի զաւառակի հայ ժողովրդին:

Ուշադրութեան արժանի յօդուած: «Մեղու Հայաստանի» զազիթի 39 № ումը պարված է բաւական հետաքրքրական և ուշադրութեան արժանի յօդուած՝ բընիկ Թէլաւեցի հայու խօսակցութիւնը «Հայկական աշխարհի» գործակից պ. Թիֆլիսեցի հայու հետ: Էդ յօդուածումը պ. «Հայկական աշխարհի» գործակիցը մէկ քանի էլի նոր յատկանիշ անուններ է ստացել օրինակ՝ լեզուագետ և կեանքաբարար:

Տէր Ատուած, ինչպէս մեծանում է էս մարդու տխրոսը: Սքանչելի մարդ:

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ ՏՆՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:
Թիֆլիս հոկտեմբերի 15:

Ռուսաստանից փոստայի չտանալու պատճառով մենք էս անգամով չենք կարողանում հաղորդել մեր ընթերցողներին Եւրոպայի առևտրական տեղեկութիւնները և վեկալի կուրսերը:

Շաբաթը Ֆրանսիացոց . . . 9 մ: 80 կ.
— Ռոսիեր . . . 10 մ: 30 կ.
Արծաթը 84% . . . 250 մ:
— 72% . . . 80 մ:
Ոսկին . . . 6 մ: 85 կ.

ՄԱՍՆԱԻՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թիֆլիսումը գրավածաւ Ա. Էնֆիաճեանցի մադաղինումը, Բէպլեան գլխաւորայումը պ. Ս. Վարդանեանցի մօտ և «Վաճառականի» խմբագրատանը

ծախվում է էս 1866 թւին տրված Պ. Տ. Ա. և Ա. Ե. Ի աշխատասիրած «ԸՆԹԵՐՅԱՐԱՆ ԵՐԵՆԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ամուսնով գիրքը հատով 40 կոպեկով, իսկ զոււմարով 35 կոպեկով:

Գրավածաւ պ. Ի. Տէր Միքայէլեանցի մադաղինումը ծախվում է 1866 թւին տրված Պ. Տ. Ա. և Ա. Ե. Ի և նրանց ընկերների աշխատասիրած «ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԱՌԻՒՆՔ» ամուսնով երեխաների կարգալու գիրքը հատով 15 կոպեկով, իսկ զոււմարով 12 կոպեկով:

Առաջիկայ 1867 թ. «Մեղու Հայաստանի» լրագիրը կհրատարակվի մի և նոյն ընթացքով և ուղղութեամբ. ինչպէս մինչև յայժմ, այն զանազանութեամբ միայն, որ եթէ բաժանորդագրութեանց թիւը շատանայ, թերթը կմեծանայ: Յանկայողները ստորագրվել Թիֆլիսի մէջ կարող են զառնալ ուղղակի խմբագրատուն, և Համբարձում Էնֆիաճեանցի մադաղեան կամ Խ. Տէր Միքայէլեանցի զրավածաւանոցը. իսկ զրոսի քաղաքներում և զիւղերում ստորագրվողները կարող են նամակով զառնալ զէպի Խմբագրատունը, յայտնելով ճշդութեամբ իրանց հասցէն և կամ մեր զործակալներին, որոնց յայտնելով մեր խորին շնորհակալութիւնը ներկայ տարվան քաշած աշխատանքների համար, խնդրում ենք յանձնառու լինել նոյն աշխատանքը և առաջիկայ տարին: «Մեղու Հայաստանի» լրագրի տարեկան զինն է 6 ուրբի արծ. թէ Թիֆլիսի մէջ և թէ արտաքոյ ստրա: Տուն հասցենու և փոստայի ծախսը խմբագրատան վերայ է:

Խմբագրող Պ. Սիմեանցի: